Հավելված N 2
ՀՀ կառավարության 2024 թվականի
օգոստոսի 22-ի N 1303-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՀԵՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԹԱՐՄԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության համայնքների (Երևան քաղաքում՝ վարչական շրջանների) վեկտորային ֆորմատով կադաստրային քարտեզների բազային և թեմատիկ տեղեկատվության (այսուհետ՝ տեղեկատվություն) պարբերական թարմացման ծառայությունների մատուցման մասին պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) հիման վրա տեղեկատվության տրամադրման կարգի հետ կապված հարաբերությունները:

2. Տեղեկատվությունը տրամադրվում է առանց սկզբնական տեղեկատվության և սկզբնական տեղեկատվությունում ժամանակագրական փոփոխությունների դիտարկման ծրագրային հնարավորության՝ սկզբնական տեղեկատվությունում կատարված բոլոր լրացումների ու փոփոխությունների հաշվառմամբ: Սույն կետի իմաստով սկզբնական տեղեկատվություն է համարվում տեղեկատվություն հայցող անձին «Տարածական տվյալների մասին» օրենքի (այսուհետ՝ օրենք) 19-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին համապատասխան տրամադրված համայնքի (Երևան քաղաքում՝ վարչական շրջանի) վեկտորային ֆորմատով կադաստրային քարտեզի բազային և թեմատիկ տեղեկատվությունը:

3. Սույն կարգով սահմանված տեղեկատվությունը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի կողմից:

2. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

4. Տեղեկատվությունը տրամադրվում է հայցող անձի կողմից e-cadastre.am կայքի միջոցով ներկայացված դիմումի և օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «բ» ենթակետով սահմանված վճարի մուծման անդորրագրի հիման վրա: Դիմումում նշվում են՝

1) համայնքի (Երևան քաղաքում՝ վարչական շրջանի) անվանումը, որի մասով պահանջվում է տեղեկատվությունը.

2) պայմանագրի ամսաթիվը և դրա համարը:

5. Տեղեկատվությունը տրամադրվում է www.e-cadastre.am կայքի միջոցով՝ շեյփ (shp) կամ դի վի ջի/դի իքս էֆ/դի ջի են (dwg/dxf/dgn) ֆորմատներով՝ տեղեկատվության տրամադրման օրվա դրությամբ:

6. Մինչև www.e-cadastre.am կայքում սույն կարգի 5-րդ կետում նշված ծրագրային ապահովման ներդրումը տեղեկատվությունը տրամադրվում է մեխանի-կական եղանակով՝ շեյփ (shp) կամ դի վի ջի/դի իքս էֆ/դի ջի են (dwg/dxf/dgn) ֆորմատներով էլեկտրոնային կրիչներով (խտասկավառակի (CD-ի) վրա կամ USB կրիչով)՝ տեղեկատվության տրամադրման օրվա դրությամբ: Սույն կարգի 5-րդ կետում նշված ծրագրային ապահովումը www.e-cadastre.am կայքում ներդրվում է մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:

7. Տեղեկատվությունը տրամադրվում է օրենքի 19-րդ հոդվածով սահմանված ժամկետներում:

8. Տեղեկատվությունը կարող է տրամադրվել փոստային կապի միջոցով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունվարի 10-ի N 100-Ն որոշմամբ սահմանված կարգով: Ընդ որում, տեղեկատվության առաքման հասցեն պայմանագրում նշված հասցեի հետ չհամընկնելու դեպքում տեղեկատվու-թյունը դիմողին փոստով չի առաքվում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

22.08.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ